ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ------ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին գլխի 17-րդ կետի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» բառերը փոխարինել «Լրատվության վարչություն» բառերով:

2) Որոշման N 2 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» բառերը փոխարինել «Լրատվության վարչություն» բառերով:

2. Սույն որոշումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանի քաղաքապետի 04.06.2015թ. 1704-Ա որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի՝ կառուցվածքային ստորաբաժանումների և առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունների համաձայն տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության նպատակները, խնդիրներն ու հիմնական գործառույթները հիմնականում վերաբերում են քաղաքապետ-զանգվածային լրատվամիջոցներ կապի ապահովմանը, քաղաքապետարանի աշխատանքների և քաղաքային նշանակության խնդիրների ու դրանց լուծումների վերաբերյալ բնակչությանն իրազեկելու պարտավորությանը.

1) մշակում և Երևանի քաղաքապետին է ներկայացնում հասարակայնության հետ կապերի և ԶԼՄ-ների հետ համագործակցության հայեցակարգը,

2) իրագործում է քաղաքապետ-զանգվածային լրատվամիջոցներ կապը,

3) ապահովում է Երևանի քաղաքապետի մամուլի ասուլիսների, հարցազրույցների, նրա մասնակցությամբ տարբեր միջոցառումների, լրատվամիջոցների ներկայացուցիչների և ղեկավարների հետ հանդիպումների նախապատրաստումը, կազմակերպումն ու լուսաբանումը,

4) ապահովում է քաղաքապետի և քաղաքապետարանի աշխատակազմի ամենօրյա գործունեության պարբերական լուսաբանումը, հաղորդագրությունների պատրաստումը,

5) կազմակերպում է օրվա մամուլի, հեռուստահաղորդումների լրաքաղը, դիտանցը (մոնիտորինգը) և ներկայացնում է Երևանի քաղաքապետին,

6) Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ՝ լրատվամիջոցներին տրամադրում է հայտարարություններ, պարզաբանումներ,

7) ապահովում է քաղաքապետարանի ինտերնետային կայքի տեղեկատվական սպասարկումը,

8) կազմակերպում է ԶԼՄ-ների, անկախ փորձագետների, քաղաքապետարանի գործունեության ոլորտներին առնչվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ մայրաքաղաքի հիմնախնդիրների քննարկումների, տարբեր միջոցառումների անցկացումը, դրանց արդյունքների հրապարակման և համապատասխան լրատվություն տրամադրելու գործընթացը,

9) ապահովում է քաղաքապետարանի ոլորտների պատասխանատուների ելույթների, մամուլի ասուլիսների, ճեպազրույցների, հանդիպումների, հարցազրույցների կազմակերպումը, ծրագրումը և անցկացումը, օժանդակում է Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմերի ղեկավարների կողմից իրականացվող աշխատանքների լուսաբանման կազմակերպմանը,

10) կազմակերպում է քաղաքապետարանի գործունեության ոլորտներին առնչվող հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու գործընթացը, իրազեկման ծրագրերի մշակումը և իրականացումը,

11) ապահովում է լրատվության ոլորտին վերաբերող՝ Երևանի քաղաքապետի որոշումների և հանձնարարականների կատարումը,

12) ծրագրում է վարչության ընթացիկ գործունեությունը,

13) Երևանի քաղաքապետի հաստատմանը ներկայացնելու նպատակով մշակում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում Վարչության աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը:

Բնակիչների/հասարակայնության հետ կապի ապահովման համար գործում է «Մեկ պատուհան» գրասենյակը, «Թեժ գիծ» ծառայությունը, որոնք անմիջականորեն համակարգվում են քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից:

Մինչդեռ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունն օրվա մեջ քաղաքացիներից ստանում է դիմում-նամակներ և հեռախոսազանգեր, որոնք անմիջականորեն առնչվում են քաղաքացիների սպասարկման գրասենյակների աշխատանքների հետ:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ նախագծով առաջարկում է Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունն անվանափոխել՝ «Լրատվության վարչություն»: Այդ կերպ վարչության անունն ու գործառույթները իրար կհամապատասխանեն և բնակչության շրջանում չեն առաջացնի ավելորդ թյուրըմբռնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ